«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԻԼԵՆԱ ԱՐՏԱԿԻ

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՒԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

## ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.02-Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ - 2026

МЕЖГОСУДАРСТВЕННАЯ ОБРАЗОВАТЕЛЬНАЯ ОРГАНИЗАЦИЯ ВЫСШЕГО ОБРАЗОБАНИЯ «РОССИЙСКО–АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ»

КАЗАРЯН МИЛЕНА АРТАКОВНА

# КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ГАРАНТИИ ОБЕСПЕЧЕНИЯ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ЦЕЛОСТНОСТИ ГОСУДАРСТВА

## АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02- Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

ЕРЕВАН – 2026

**Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի եվրոպական համալսարանում**

| | |
|---|---|
| Գիտական ղեկավար՝ | Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Հայկի Խաչատրյան** |
| Պաշտոնական ընդդիմախոսներ՝ | Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ **Աշոտ Սերյոժայի Հայրապետյան**<br>Իրավաբանական գիտությունների թեկնածու դոցենտ **Վահե Հովիկի Սայադյան** |
| Առաջատար կազմակերպություն՝ | **ՀՀ պետական կառավարման ակադեմիա** |

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հոկտեմբերի 8-ին, ժամը 16:00-ին, «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպությունում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ «Ռուս-Հայկական համալսարան» ԲԿՄՊԿԿ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի սեպտեմբերի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ.Հ. Հայրապետյան**

**Тема диссертации утверждена в Европейском университете Армении**

| | |
|---|---|
| Научный руководитель: | Доктор юридических наук, профессор **Ашот Гайкович Хачатрян** |
| Официальные оппоненты: | Доктор юридических наук, доцент **Ашот Сережаевич Айрапетян**<br>Кандидат юридических наук, доцент **Ваге Овикович Саядян** |
| Ведущая организация: | **Государственная академия управления Республики Армения** |

Защита состоится 8 октября 2026 года в 16:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Межгосударственной образовательной организации высшего образования «Российско-Армянский университет» (0051, г. Ереван, ул. О. Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке МГОВО «Российско-Армянскоий университет».

Автореферат разослан 7 сентября 2026 года.

**Ученый секретарь специализированного совета,**
**кандидат юридических наук** **Дж.А. Айрапетян**

# ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

**Հետազոտության թեմայի արդիականությունը.** Ժամանակակից պայմաններում պետությունների տարածքային ամբողջականության ապահովման դերը, նշանակությունն ու անհրաժեշտությունը անհերքելի է, ինչը հիմնավորվում է գործնականում բոլոր պետությունների սահմանադրություններում դրա ամրագրմամբ: Ինչպես միջպետական, այնպես էլ ներպետականհարաբերություններում պետական սահմանների անփոփոխելիու-թյունն ու տարածքային ամբողջականությունը դիտարկվել են պետությունների միջև փոխշահավետ ու բարիդրացիական հարաբերությունների հաստատման գլխավոր պայմանը:

Եվ հիշյալ հանգամանքը հաշվի առնելով անհրաժեշտ է արձանագրել, որ ատենախոսական աշխատանքի թեմայի արդիականությունը ոչ միայն պահանջարկված է, այլև պայմանավորված է Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական իրադարձություններով ու Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ապահովման և տարածքի անձեռնմխելիության պահպանման հետ կապված մարտահրավերներով:

Հայոց պետականությանը բնորոշ հատկանիշների համակարգում իր քաղաքական, սոցիալական և իրավական նշանակությամբ առանձնանում է տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրահիրավական հիմնախնդիրը:

Հաշվի առնելով տարածաշրջանում աշխարհաքաղաքական պայթյունավտանգ իրավիճակը, ինչպես նաև հարևան երկրների ծավալապաշտական նկրտումները մեր հայրենիքի տարածքային ամբողջականության նկատմամբ, հրամայական է դառնում ոչ միայն երկրի սահմանների արդյունավետ պաշտպանության համակարգի ստեղծումը, այլ նաև սահմանադրական իրավունքի գիտության առաջնահերթությունների շրջանակում մշակել գիտականորեն հիմնավորված հայեցակարգային տեսական այնպիսի մոտեցումներ, որոնք հիմք կհանդիսանան տվյալ ոլորտի իրավակարգավորումների կատարեալագործման և Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ապահովման նոր ռազմավարության ստեղծման համար:

Երկրի տարածքային ամբողջականության ապահովման կառուցակարգը պետք է ներառի նաև սահմանադրահիրավական երաշխիքների համակարգը, որն իր արտացոլումը պետք է ստանա նոր մշակվող սահմանադրական դրույթներում և համապատասխան օրենսդրական ակտերում:

Հետևաբար, գտնում ենք, որ երկրի տարածքային ամբողջականության ապահովման հետ կապված հիմնախնդրի գիտական հետազոտությունը խիստ արդիական է, քանզի այն ձեռք է բերել առանձնակի նշանակություն ազգային անվտանգության համակարգում:

**Հետազոտության թեմայի գիտական ուսումնասիրության վիճակը.** Անհրաժեշտ է նկատել, հայրենական իրավագիտությունում այս թեման բոլորովին ուսումնասիրված չէ սահմանադրական իրավունքի գիտակարգի տեսանկյունից: Վերլուծելով հետազոտության համար ընտրված թեմայի բովանդակությունը՝

միաժամանակ հարկ է նշել, որ առանձին երկրների իրավագետների հանրության կողմից պետությունների տարածքային ամբողջականությունը ուսումնասիրվել է ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ տվյալ երկրի իրավական համակարգի առանձնահատկություններով պայմանավորված: Այդ պատճառով, արտասահմանյան գիտական աղբյուրները օգտագործվել են այնքանով, որքանով տեսականորեն դրանք հիմնավորված կլինեին սույն հետազոտության համար:

Այսպես, հետազոտությունն իրականացնելիս օգտագործվել են մի շարք հայ և արտասահմանյան երկրների հեղինակների աշխատություններ, ինչպիսիք են՝ Վ.Գ.Աննենկովի, Ս.Ա.Ավակյանի, Ի.Ա.Ալեքաստրովայի, Ս.Ս.Ալեքսեևի, Ս.Ն.Բաբուրինի, Յու.Գ.Բարսեղովի, Վ.Վ.Բեսսոնովի, Ա.Վ.Գուդկովի, Գ.Դանիելյանի, Դևիդ Դոնատիի, Ի.Ա.Իսայևի, Ա.Ի,Կազաննիկի, Ի.Վ.Լևակինի, Ի.Դ.Լևինի, Ա.Ա.Խաչատրյանի, Ա.Հ.Խաչատրյանի, Ս.Վ.Նարուտտոյի, Ն.Վ.Օստրոուխովի, Վ.Պողոսյանի, Վ.Ի.Ռադչենկոյի, Մ.Ա.Ռախմետովի, Ս.Վ.Վիտրյանյուկի, Ն.Վ.Սարգսյանի, Ե.Ա.Սիսոյևայի, Ի.Պ.Տրայնինի, Լ.Շալլանդի, Բ.Ս.Էբզեևի, Հվարդ Սմիթի, Հ.Քելզենի, Ա.Վերդրոսսի, Լյու Ցզայցիի, Էռնեստ Վիլսոնի, Ե.Ս.Շուգրինայի, Ն.Ա.Ուստմենկոյի, Ն.Վ.Յավկինի և այլոց աշխատությունները, ինչպես նաև՝ միջազգային իրավական ակտերը, Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների Սահմանադրությունները, տարածքային ամբողջականության ապահովման ոլորտի օրենքները, դատական պրակտիկան, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում են պետության տարածքի անձեռնմխելիության և տարածքային ամբողջականության ապահովմանը և պաշտպանությանը:

Հետևաբար, սույն ատենախոսական հեազոտությունը առաջին փորձերից մեկն է, որը կոչված է մասամբ լրացնել առկա բացը հայրենական իրավագիտության մեջ:

**Հետազոտության օբյեկտը և առարկան.** Սույն ատենախոսական հետազոտության օբյեկտը երկրի տարածքային ամբողջականության ապահովման ոլորտի հասարակական հարաբերություններն են:

**Հետազոտության առարկան** պետության տարածքային ամբողջականության երաշխիքների համակարգն է, որոնք ամրագրված է ՀՀ Սահմանադրության դրույթներում և ընթացիկ օրենսդրական ակտերում, ինչպես նաև դրանց կատարելագործման խնդիրները:

**Հետազոտության նպատակը և խնդիրները.** Սույն հետազոտության նպատակն է համակարգել և ճշգրտել տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքների շրջանակը, դրանց իրականացման կառուցակարգերը և գիտականորեն հիմնավորված առաջարկություններ մշակել դրանց կատարելագործման, արդյունավետության բարձրացման ու հետագա զարգացման համար:

Դրված նպատակին հետամուտ, հեղինակը փորձել է լուծել հետևյալ խնդիրները.

ա) վերլուծել տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքների բովանդակային առանձնահատկությունները,

բ) բացահայտել տարածքային ամբողջականության ապահովման երաշխիքների տեսական ու գործնական կողմերի առավելությունները և առկա բաց թողումները,

գ) առաջարկել գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ, տեսական դրույթները և գործնական առաջարկություններ տարածքային ամբողջականության արդյունավետ ապահովման և առկա թերությունների վերացման ուղղությամբ,

դ) սահմանադրական փոփոխությունների համատեքստում մշակել սահմանադրական և օրենսդրական դրույթների նախագծեր՝ առավել արդյունավետ դարձնելու պետության տարածքային ամբողջականության ապահովման երաշխիքների համակարգը և կառուցակարգը:

**Հետազոտության մեթոդաբանական հիմունքները.** Հետազոտության մեթոդոլագիական հիմքն են կազմել թե՛ ընդհանուր գիտական և թե՛ մասնավոր գիտական մեթոդները: Մասնավորապես, կիրառվել են ընդհանուր գիտական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են ինդուկցիան, դեդուկցիան, անալիզը, սինթեզը, համակարագակառուցվածքային մեթոդը և այլն, ինչպես նաև մասնավոր գիտական՝ իրավահամեմատական, ձևայական իրավաբանական վերլուծության և այլ մեթոդներ:

**Հետազոտության տեսական և նորմատիվ փորձարարական հենքը.** Սույն հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել սահմանադրական իրավունքի, պետության և իրավունքի տեսության, միջազգային իրավունքի գիտակարգերը: Որպես նորմատիվ-փորձարարական հենք են հանդիսացել՝ ՀՀ Սահմանադրությունը, գործող օրենսդրական ակտերը, միջազգային իրավական ակտերը, ներպետական ռազմավարական հայեցակարգերը:

**Հետազոտության գիտական նորույթը.** Հետազոտության գիտական նորույթն, ամենից առաջ արտահայտվում է նրանում, որ համակարգված և համալիր հետազոտության է ենթարկվել պետության տարածքային ամբողջականության հետ կապված տեսական մոտեցումների, օրենսդրական ակտերի և իրավակիրառ պրակտիկայի նյութերը, վեր են հանվել դրանցում առկա բաց թողումները, թերացումները, ինչպես նաև տեսականորեն հիմնավորված առաջարկություններ է մշակվել առկա թերացումները վերացնելու և կատարելագործելու ուղղությամբ: Բացի դրանից, աշխատանքում ներկայացված է հեղինակային հայեցակարգ տարածքային ամբողջականության երաշխիքների համակարգի և դրանց կատարելագործման, արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

**Գիտական նորույթի տարրեր են պարունակվում նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթներում.**

1. Աշխատանքում առաջարկվում է պետական տարածքի որպես տարածքային ամբողջականության օբյեկտի հեղինակային հետևյալ սահմանումը, ըստ որի, պետության տարածքն ընկալվում է որպես պետության պարտադիր հատկանիշ, պետության՝ որպես քաղաքական կազմակերպության անքակտելի մաս, պետության գոյության անհրաժեշտ ու բնական պայման, պետության մեջ հասարակության կազմակերպման նյութական հիմք, և միաժամանակ, սահմանադրահիրավական նորմերում ամրագրված և

կազմակերպչական համապատասխան տարրերի համակարգ, որոնց միջոցով ապահովվում է պետության միասնությունն ու տարածքային ամբողջականությունը:

Միաժամանակ, աշխատանքում հիմնավորվում է հետևյալ մոտեցումը, որ պետական տարածքի պաշտպանության շրջանակում պետության միասնության և տարածքային ամբողջականությունն իր հերթին բնութագրվում է որպես պետությունների անքակտելի որակական հատկանիշներ և միաժամանակ, միմյանց փոխլրացնող և փոխպայմանավորված սահմանադրական արժեքներ, որոնք ապահովվում են սահմանադրաիրավական երաշխիքներով և որոշակի կառուցակարգերով:

2. Սահմադրաիրավական նորմերի համակարգային վերլուծության համատեքստում ատենախոսությունում հիմնավորվել է հետևյալ դիրքորոշումը, որ պետության տարածքային ամբողջականության սկզբունքը բովանդակում է որոշակի տարրերի ամբողջություն, դրանք են. ա) պետության ինքնիշխանությունը տարածվում է նրա ամբողջ տարածքի վրա, բ) պետությունը ապահովում է իր տարածքի սահմանների անձեռնմխելիությունը, գ) պետության պաշտպանության ու անվտանգության ապահովման միջոցով երաշխավորվում է իր տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը, դ) պետության տարածքի փոփոխություն կարող է կատարվել բացառապես սահմանադրական վերահսկողության շրջանակում իրականացվող հանրաքվեի միջոցով:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգավորումների տրամաբանության շրջանակում աշխատանքում հիմնավորվում է հետևյալ դիրքորոշումը, որ՝ պետության տարածքային ամբողջականությունն անհրաժեշտ է դիտարկել որպես պետության ինքնիշխանության ապահովման երաշխիք, որը գտնվում է պետության պաշտպանության, անվտանգության և տարածքի սահմանների անձեռնմխելիության հետ անքակտելի կապի մեջ, ընկալվում է որպես պետության կողմից պահպանության ենթակա և պաշտպանության առարկա սահմանադրական սկզբունք:

3. Սահմադրաիրավական նորմերի և իրավակիրառ պրակտիկայի վերլուծության արդյունքների հիման վրա հիմնավորվում է հետևյալ գաղափարը, ըստ որի՝ պետության տարածքային ամբողջականության ապահովվումը դրսևորվում է երկակի նշանակությամբ՝ արտաքին և ներքին, ընդ որում, եթե արտաքին հարթությունում պետությունը «առանձնանում» է մյուս ինքնիշխան պետություններից ոչ միայն սահմանների սահմանազատման միջոցով, ինչպես նաև իր տարածքային ամբողջականությամբ և հանրային իշխանության միասնական համակարգով, արտաքին քաղաքականության առանձնահատկություններով, պետության զարգացման նպատակով ու տեսլականով, միջազգային իրավակարգի հանդեպ իր մոտեցումներով և այլն, ապա ներքին հարթությունում պետության տարածքային ամբողջականությունը, նախևառաջ, արտահայտվում է ներքին քաղաքական, տնտեսական իրավական, մշակութային և բարոյահոգեբանական, ազգային գաղափարախոսական առումներում, որոնք նպաստում են նաև պետության և հասարակության անվտանգության ապահովմանը և դրանց բնականոն զարգացմանը:

4. Պետության տարածքային ամբողջականության սահմանադրական սկզբունքի տեսության ու պրակտիկայի, ինչպես նաև միջազգային փորձի վերլուծության արդյունքներով հեղինակը կատարել է հետևյալ եզրահանգումը, որ տարածքային ամբողջականության ապահովման սահմանների սահմանման վերաբերյալ առկա են հետևյալ մոտեցումները.

ա) պետության անկախության պաշտպանության առավել արդյունավետ և երկարաժամկետ մեխանիզմ է դիտարկվում սահմանադրական կարգի, այդ թվում՝ տարածքային ամբողջականության սահմանադրական ամրագրումը, որի ապահովման սահմանները սահմանվում են՝ ելնելով քաղաքացիների, հասարակության և պետության շահերից,

բ) տարածքային ամբողջականության երաշխավորման կարևորագույն միջոց է պետության տարածքի օտարման անթույլատրելությունը, որն ընկալվում է որպես պետական ինքնիշխանության տարր, և պետական գործունեության շրջանակում պետությունը չի կարող առաջնորդվել միայն իր շահերով, քանի որ պետական իշխանությունը պետք է իրականացվի հասարակության և քաղաքացիների շահերից ելնելով և հիմնված լինի բնակչության վստահության վրա,

գ) պետությունների տարածքային ամբողջականության վերականգնմանը և վիճելի տարածքների նկատմամբ իրենց ինքնիշխանության ու իրավազորության հաստատման վերաբերյալ տարբեր երկրների սահմանադրություններում դրանց ամրագրման անհրաժեշտությամբ պայմանավորված, որ հատկապես ժողովուրդների ու ազգերի իրավահավասարության ու ինքնորոշման իրավունքի արդյունավետ իրականացման համար առաջնահերթ կարևորություն պետք է տրվի այն ազգերին ու ժողովուրդների, որոնք ինքնորոշվում են իրենց պատմական տարածքում, որն ամբողջությամբ վերաբերելի է Արցախի ժողովրդի օրինական ու արդարացի պահանջների կատարմանը,

դ) պետության տարածքային ամբողջականության ապահովումն իրականացնող մարմինների լիազորությունների բաշխման համատեքստում պետության գլխի, կառավարության, խորհրդարանի, զինված ուժերի և դատարանների լիազորությունների իրական շրջանակը կախված է տվյալ պետության կառավարման ձևից, կառավարության կառուցվածքից, քաղաքական ռեժիմի բնույթից և կոնկրետ սոցիալ-քաղաքական իրավիճակից:

5. Աշխատանքում հեղինակային ձևակերպում են ստացել պետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքների վերաբերյալ հետևյալ մոտեցումները, որ.

ա) պետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքները դրանք սահմանադրաիրավական այն կառուցակարգերն են, որոնց միջոցով իրականացվում են ոչ միայն ապահովման գործառույթներ, այլև՝ դրանց նորմատիվ իրավական բովանդակությունն անմիջականորեն ուղղված է սոցիալական իրավական որևէ օբյեկտի ապահովմանը,

բ) սահմանադրահիրավական այդ երաշխիքներն օժտված են գործառնական նշանակությամբ, որոնք դրսևորվում են սահմանադրահիրավական սկզբունքներից, նորմերից, արժեքներից բխող և տեսական-իրավական հայացքների հիման վրա ձևավորված իրավական ապահովման ենթակա օբյեկտների՝ ստեղծման, իրագործման, պահպանման և պաշտպանության գործառույթների միջոցով,

գ) պետության տարածքային ամբողջականության ապահովումը պայմանավորված է որոշակի սահմադրահիրավական երաշխիքների առկայությամբ, դրանք են՝ ժողովրդաիշխանությունը, պետական ինքնիշխանությունը, մարդու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, զինված ուժերը, տեղական ինքնակառավարման համակարգը, պետության միասնական իրավական ու տնտեսական տարածքը, որոնք միաժամանակ՝ պետական իշխանության գերակայության, պետության միասնության ու անկախության երաշխավորման համատեքստում կարող են դիտարկվել որպես Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան պետության տարածքային ամբողջականության ապահովման հիմնական կամ երաշխիքային նշանակություն ունեցող պայմաններ:

6. Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության համապարփակ ու միասնական կարգավորում ապահովելու նպատակով առաջարկվում է պետական տարածքի ամբողջականության հետ անչվող հարաբերությունները կարգավորել միասնական օրենսդրական ակտով՝ «Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության և Հայաստանի Հանրապետության պետական տարածքի անձեռնմխելիության ապահովման ու պահպանման մասին» ՀՀ օրենքով (նախագիծը ներկայացված է Հավելվածում, կցվում է), որի ընդունմամբ կերաշխավորի պետության տարածքային ամբողջականության ապահովման համակարգի իրավական բաղադրիչի միասնությունը, ինչն իր հերթին հնարավորություն կտա ձևավորելու ամբողջական, ներդաշնակ և անընդհատ զարգացող ու կատարելագործվող համակարգ:

7. Պետության տարածքային ամբողջականության և ժողովուրդների ու ազգերի իրավահավասարության և ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարաբերակցության շրջանակում կատարված վերլուծությունների արդյունքում հեղինակի կողմից հիմնավորվել է հետևյալ դիրքորոշումները՝

ա) միջազգային անվտանգության երաշխավորման հիմքում պետությունների տարածքային ամբողջականության ապահովումը բխում է պետության և ազգային անվտանգության կենսական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից,

բ) հաշվի առնելով այն, որ իրավական ու ժամանակակից սահմանադրություն ունեցող պետությունների կենսական շահերը բովանդակող ժողովրդի՝ որպես քաղաքացիների հավաքական հանրույթի, ինչպես նաև քաղաքացիների իրավունքերն ու ազատությունները գերակա են, ուստի պետության կենսական շահերի պաշտպանությունը պետք է բխի ինչպես մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների, այնպես էլ՝ ժողովրդի ինքնորոշման իրավունքի արդյունավետ պաշտպանության բովանդակությունից,

գ) պետության տարածքային ամբողջականության հարգումն ու պահպանումը իրավաչափ է ու արդարացված, եթե միջազգային իրավունքի նորմերի շրջանակում և դրանց հիման վրա հիմնավորվել է, որ տվյալ պետությանը չի ամրակցվել այլ պետության պատմական տարածք կամ տարածքի մաս՝ վերջինիս նկատմամբ ոչ իրավաչափ (այդ թվում՝ ոտնձգության) գործողության արդյունքում:

**Հետազոտության տեսական նշանակությունը.** Սույն ատենախոսական աշխատանքի տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության արդյունքները նորովի են մեկնաբանում պետության տարածքային ամբողջականության սկզբունքի էությունը, որպես պատմական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, իրավական և հոգևոր մշակույթի զարգացման կենսական նախապայման, ինչպես նաև վերահիմաստավորվում է պետական տարածքի անձեռնմխելիության պահպանման դերն ու նշանակությունը ժողովրդի (ազգի) և նրա յուրաքանչյուր անդամի ազատ զարգացման գործընթացում:

**Հետազոտության գործնական նշանակությունը.** Սույն ատենախոսական աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության արդյունքները օգտակար կլինեն պետական տարածքի ապահովման սուբյեկտների գործունեության իրականացման ոլորտում, սահմանադրական փոփոխումների և օրենսդրության կատարելագործման գործընթացներում, ինչպես նաև սահմանադրական իրավունքի գիտակարգի ուսումնառության ոլորտում:

**Հետազոտության փորձաքննությունը.** Սույն ատենախոսական աշխատանքը կատարվել է Հայաստանի Եվրոպական համալսարանում, որտեղ իրականացվել է դրա նախնական քննարկումը և երաշխավորումը հրապարակային պաշտպանության:

**Աշխատանքի կառուցվածքը. Ս**ույն ատենախոսական աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է հետազոտության օբյեկտով, առարկայով և խնդիրներով: Ըստ այդմ աշխատանքը բաղկացած է՝ ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են ութը պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և Հավելվածից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության** մեջ հիմնավորված են հետազոտության թեմայի արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակները, նպատակներին հասնելու համար լուծման ենթակա խնդիրները, ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմունքները, գիտական նորույթը, պաշտպանության են ներկայացվում գիտական նորույթներ, ատենախոսության գիտագործնական նշանակությունը, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Պետության տարածքի և տարածքային ամբողջականության հարաբերակցության բնույթն ու բովանդակությունը» վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

«**Պետության տարածքի և տարածքային ամբողջականության հարաբերակցությունը. իրավաընկալման հիմնահարցերը և տեսական-իրավական վերլուծություն**» վերտառությամբ առաջին ենթագլխում քննարկվում են պետության

տարածքի որպես պետության պարտադիր հատկանիշ, նրա գոյության անհրաժեշտ ու բնական պայմանի և տարածքային ամբողջականության ապահովման օբյեկտ հիմնահարցերը:

«**Տարածքային ամբողջականությունը պետության միասնության ապահովման ու պահպանման համատեքստում. տեսական և գործնական մոտեցումներ**» վերտառությամբ երկրորդ ենթագլխում հետազոտվում են տարածքային ամբողջականության տեսական ու կիրառական նշանակություն ունեցող հիմնախնդիրները պետության միասնության ապահովման ու պահպանման համատեքստում:

«**Տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրահիրավական կարգավորումները արտասահմանյան երկրներում**» վերտառությամբ երրորդ ենթագլխում վերլուծվում են պետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրահիրավական կարգավորման օտարերկրյա փորձը, ընդ որում՝ առանձնացնելով տարածքային ամբողջականության պաշտպանության առավել արդյունավետ ընդհանուր մոտեցումները, որոնք Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի համար կարող են կարևոր նշանակություն հատկապես պետության տարածքային ամբողջականության պաշտպանության ազգային իրավական կառուցակարգերի լավարկման (օպտիմալացման), այնպես էլ տարածքային ամբողջականության վերականգնման պատմական տարածքների նկատմամբ ժողովուրդների ու ազգերի իրավահավասարության ու ինքնորոշման իրավունքի արդյունավետ իրականացման համար առաջնահերթություն հաղորդելիս:

Ատենախոսության երկրորդ՝ «Հայաստանի Հանրապետության **տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրահիրավական երաշխիքները**» վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

«**Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ապահովման օրենսդրական կարգավորման զարգացումը**» վերտառությամբ առաջին ենթագլխում հետազոտվում են Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության համապարփակ ու միասնականություն ապահովելու նպատակով պայմանավորված պետության տարածքի ամբողջականության հետ առնչվող հարաբերությունները միասնական օրենսդրական ակտով կարգավորելու անհրաժեշտության հիմնահարցերը:

Հետազոտման արդյունքում ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության և Հայաստանի Հանրապետության պետական տարածքի անձեռնմխելիության ապահովման ու պահպանման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որն, ըստ հեղինակի, կերաշխավորի պետության տարածքային ամբողջականության ապահովման միասնությունը և հնարավորություն կտա ձևավորելու ամբողջական, ներդաշնակ և անընդհատ զարգացող ու կատարելագործվող համակարգ:

«**Պետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրահիրավական երաշխիքները. տեսական-իրավական վերլուծություն**» վերտառությամբ երկրորդ ենթագլխում վերլուծվում են պետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրահիրավական երաշխիքները, որոնք, մի

կողմից, պայմանավորված են ժողովրդաիշխանության, պետության ինքնիշխանության, մարդու իրավունքների, ազատությունների, պատվի ու արժանապատվության, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի, զինված ուժերի, պետության միասնական իրավական ու տնտեսական տարածքի և այլ տարրերի առկայությամբ, իսկ մյուս կողմից, օժտված են գործառնական նշանակությամբ, որոնք դրսևորվում են սահմանադրաիրավական սկզբունքներից, նորմերից, արժեքներից բխող և տեսական-իրավական հայացքների հիման վրա ձևավորված իրավական ապահովման ենթակա օբյեկտների՝ ստեղծման, իրագործման, պահպանման և պաշտպանության գործառույթների միջոցով:

«**Տարածքային ամբողջականության սկզբունքի սահմանադրական բովանդակությունն ու գործառնական նշանակությունը**» վերտառությամբ երրորդ ենթագլխում դիտարկվում է սահմանադրական իրավունքի տեսության կարևորագույն հարցերից մեկը՝ պետության տարածքային ամբողջականությունը որպես սահմանադրական սկզբունք, որն ըստ հեղինակի՝ բովանդակում է որոշակի տարրերի ամբողջություն, այդ թվում՝ պետության ինքնիշխանություն, վերջինիս տարածքի սահմանների անձեռնմխելիություն և այլն, ինչպես նաև հանդիսանում է պետության ինքնիշխանության ապահովման առանցքային երաշխիք՝ պետության պաշտպանության, անվտանգության և տարածքի սահմանների անձեռնմխելիության ապահովման առումով:

Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության **տարածքային ամբողջականության սահմանադրաիրավական ապահովման կառուցակարգերը**» վերտառությամբ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

«**Պետական իշխանությունը և տեղական ինքնակառավարումը. փոխգործակցության դիալեկտիկան պետության տարածքային ամբողջականության ապահովման գործընթացում**» վերտառությամբ առաջին ենթագլխում քննարկվում են պետական իշխանության ու կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև պետության տարածքային ամբողջականության ապահովման հարցերով լիազորությունների ինչպես արդյունավետ, այնպես էլ համաչափ բաշխման երաշխավորման հիմնախնդիրները, առաջարկվում են դրանց լուծման ուղիներ:

«**Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ապահովումը միջազգային իրավական առանձին չափորոշիչների շրջանակում**» վերտառությամբ երկրորդ ենթագլխում դիտարկվում են Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ապահովման հիմնահարցերը միջազգային իրավական առանձին չափորոշիչների համատեքստում: Կարևորում են այն հետևությունները, ըստ որոնց՝ պետության տարածքային ամբողջականության ապահովումը բխում է պետության և ազգային անվտանգության կենսական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, պետության տարածքային ամբողջականության հարգումն ու պահպանումը իրավաչափ է ու արդարացված միջազգային իրավունքի նորմերի շրջանակում և այլն:

**Հետազոտության վերլուծության արդյունքներից ելնելով կատարվել են հետևյալ եզրահանգումները.**

**1.** Պետական տարածքի և պետության տարածքային ամբողջականության հարաբերակցության շրջանակում պետության տարածքն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն իրավաքաղաքական կատեգորիա է, այլ նաև տվյալ ժողովրդի ինքնությունը հաստատող նյութական բաղադրիչ, և միաժամանակ՝ ապրելու և արարելու կենսապայման, որտեղ խոսք կարող է լինել մշակույթի, տնտեսության, իրավական համակարգի և ժողովրդի կենսապահովման այլ պայմանների մասին:

**2.** Պետական տարածքի և պետության տարածքային ամբողջականության հարաբերակցության շրջանակում պետության տարածքը՝ որպես սահմանադրաիրավական կարգավորման օբյեկտ, ընդհանրացված ձևով կարելի է ներկայացնել սահմանադրական իրավունքի հետևյալ ինստիտուտների տեսանկյունից. ա) որոնցում ամրագրված է պետության տարածքային գերակայությունը բնութագրվում է երկակի հատկանիշներով՝ 1) պետության լիիրավ և բացառիկ ինքնիշխանությունը իր տարածքի նկատմամբ (imporium), 2) տարածքը որպես պետության նյութական հիմք, ներառում է ոչ միայն ցամաքը, այլև ներքին և արտաքին ջրերը, օդային տարածությունը (dominium), բ) որոնք ենթադրում են սահմանադրաիրավական հարցերի այնպիսի լուծումներ, որոնք ունեն համապետական ու համայնքային նշանակություն, **գ**) որոնք լիազորված են լուծելու մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացման ու պաշտպանության խնդիրները:

**3.** Պետության տարածքային ամբողջականության ապահովման արտաքին և ներքին հարթություններում դրսևորման շրջանակում՝ ա) պետության միասնությունը, ըստ էության, պայմանավորված է նրա տարածքային ամբողջականությամբ, բ) պետության տարածքային ամբողջականությունն իր հերթին անհրաժեշտ է ընկալել որպես պետության նյութական հատկանիշ կամ նրա ինքնիշխանության նյութական նախապայման, և միաժամանակ՝ այսպես կոչված «տարածքային գերակայության երաշխավոր», գ) պետության տարածքային ամբողջականությունը բոլոր դեպքերում դրսևորվում է պետական տարածքի անօտարելիությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ տարածքը հանդիսանում է բռնի կամ կամավոր հնարավոր օտարման առարկա, թե ոչ, դ) պետական միասնության համատեքստում պետության տարածքային ամբողջականության ապահովումը հանդիսանում է ոչ միայն պետության որակական բնութագրում, այլև կարևոր սահմանադրական այնպիսի արժեք, որը բխում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և միասնության պահպանման սահմանադրական սկզբունքների բովանդակությունից:

**4.** Պետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրաիրավական կարգավորման օտարերկրյա փորձի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել տարածքային ամբողջականության պաշտպանության առավել արդյունավետ ընդհանուր մոտեցումները, որոնք Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի համար կարող են կարևոր նշանակություն հատկապես պետության տարածքային ամբողջականության պաշտպանության ազգային իրավական կառուցակարգերի լավարկման (օպտիմալացման), այնպես էլ տարածքային ամբողջականության վերականգնման պատմական տարածքների նկատմամբ ժողովուրդների ու ազգերի իրավահավասարության ու ինքնորոշման իրավունքի արդյունավետ իրականացման համար առաջնահերթություն հաղորդելիս:

**5.** Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ապահովման երաշխիքներին իրավական ձև հաղորդելն ինքնին անհրաժեշտ ու կարևոր գործընթաց է, որը կոչված է ապահովել ոչ միայն պետության ինքնիշխանության ու միասնության պաշտպանությունը, այլև մարդու իրավունքների արդյունավետ իրացումը և այդ իրավունքների պաշտպանությունը որևէ ոտնձգությունից: Սահմանադրաիրավական երաշխիքները կարող են ամրագրված լինել սահմանադրական սկզբունքներում, սահմանադրական և իրավական այլ նորմերում կամ սահմանադրական իրավունքի տեսության մեջ (իրավական պետության, արտաքին քաղաքականության, երկրի պաշտպանության և անվտանգության ռազմավարությունում և այլն):

Միաժամանակ, սահմանադրաիրավական երաշխիքները դրանք սահմանադրաիրավական այն կառուցակարգերն են, որոնք իրականացնում են ոչ միայն ապահովման գործառույթներ, այլև՝ դրանց նորմատիվ իրավական բովանդակությունն անմիջականորեն ուղղված է սոցիալ-իրավական որևէ օբյեկտի ապահովմանը:

**6.** Պետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքները կարող են արդյունավետ իրագործվել, եթե ապահովված են նաև համապատասխան կառուցվածքային բաղադրատարրերով, ինչպիսին են՝ իրավասու սուբյեկտները, անհրաժեշտ նյութական բաղադրիչները և այլն, հետևաբար, միայն իրավունքի, իրավական երաշխիքների, իրավական կառուցակարգերի և կառուցվածքային բաղադրիչների միասնական փոխգործակցության արդյունքում, մասնավորապես՝ պետության տարածքային ամբողջականության ապահովման շրջանակում, հնարավոր է հասնել առաջադրված նպատակին և համապատասխան արդյունք արձանագրել:

**7.** Տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքներն օժտված են նաև գործառնական նշանակությամբ, որոնք դրսևորվում են տարբեր իրավական ապահովման գործառույթների միջոցով, որպեսզիք են՝ 1) սահմանադրաիրավական սկզբունքներից, նորմերից, արժեքներից բխող և տեսական-իրավական հայացքների հիման վրա ձևավորված իրավական ապահովման օբյեկտների ստեղծման գործառույթը, 2) արդեն իսկ գոյություն ունեցող իրավական ապահովման հիշյալ օբյեկտների իրագործման գործառույթը, 3) այդ օբյեկտների արդյունավետ գործառնության պահպանման գործառույթը, 4) իրավական ապահովման նույն օբյեկտների պաշտպանության գործառույթը:

Այստեղից, սահմանադրաիրավական երաշխիքների էության և բովանդակության վերլուծությունը թույլ է տալիս սահմանել սահմանադրական այդ կատեգորիան՝ որպես իրավաբանորեն ամրագրված և կառուցվածքային առումով ներառված եղանակների, միջոցների, մեթոդների կուռ տրամաբանական համակարգ, որն ուղղված է իրավական օբյեկտների, այդ թվում՝ պետության տարածքային ամբողջականության ապահովմանը: Այդ առումով, յուրաքանչյուր պետության համար տարածքային ամբողջականության ապահովումն ինքնին ենթադրում է բազմազան ու մշտական երաշխիքների առկայություն: Եվ այդպիսի երաշխիքների սահմանումը և դրանց հետ կապված հիմնախնդիրների լուծումը ինքնին ընկալվում է այդ պետության պետական քաղաքականության կարևոր բաղկացուցիչ մաս:

**8.** Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքները դրսևորվում են իրենց գերակայությամբ և առաջնահերթությամբ, որպեսզիք են՝ ժողովրդաիշխանությունը, պետական ինքնիշխանությունը, մարդու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, զինված ուժերը, տեղական ինքնակառավարման համակարգը, պետության միասնական իրավական ու տնտեսական տարածքը, որոնք միաժամանակ՝ պետական իշխանության գերակայության, պետության միասնության ու անկախության երաշխավորման համատեքստում կարող են դիտարկվել որպես Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան պետության տարածքային ամբողջականության ապահովման հիմնական կամ երաշխիքային նշանակություն ունեցող պայմաններ:

**9.** Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության համապարփակ ու միասնական կարգավորում ապահովելու նպատակով պետական տարածքի ամբողջականության հետ կապված հարաբերությունները միասնական ակտով՝ «Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության և Հայաստանի Հանրապետության պետական տարածքի անձեռնմխելիության ապահովման ու պահպանման մասին» ՀՀ օրենքով կարգավորելու անհրաժեշտությունը կարևոր և հիմնարար նշանակություն կարող է ունենալ ոչ միայն ազգային պետականաշինության զարգացման համար, այլև՝ պետության տարածքային ամբողջականության ապահովմամբ պայմանավորված արդի ժամանակաշրջանում միայն հնարավոր կլինի խոսել լրացուցիչ օրենքներ ընդունելու, ճյուղային և այլ օրենքներում անհրաժեշտ փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին:

Առաջարկվող օրենքի ընդունմամբ կլուծվեն հետևյալ կարևոր խնդիրները՝ ա) Ազգային ժողովի՝ որպես օրենսդիր և ներկայացուցչական մարմնի ընդունած իրավական ակտն առավելապես կարտահայտի ժողովրդի կամքը, բ) կապահովվի սահմանադրաիրավական այն պահանջը, որ բացառապես սահմանադրությամբ և օրենքներով են սահմանվում պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև անձանց պարտականություններն ու իրավունքները (լիազորությունները), գ) կերաշխավորի պետության տարածքային ամբողջականության ապահովման համակարգի իրավական բաղադրիչի միասնությունը, ինչը հնարավորություն կտա ձևավորելու ամբողջական, ներդաշնակ և անընդհատ կատարելագործվող համակարգ:

Միաժամանակ, հետազոտման առարկա ոլորտում իրավական համակարգի նման միասնական զարգացումն ապահովելու դեպքում՝ ա) կստեղծվեն բոլոր նախապայմաններն ու երաշխիքները Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունն արդյունավետ ու լիարժեք ապահովելու համար, բ) կնպաստեն անհրաժեշտ ու այլ համակարգերի, միջոցների, կառուցակարգերի կատարելագործմանը, գ) և որպես արդյունք՝ հաստատուն իրավական հիմքերի վրա կդրվեն Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ապահովումը:

**10.** Հանրային իշխանության մարմիններին միջև փոխադարձ գործակցություն ապահովելու, ինչպես նաև պետության միասնությանն ու տարածքային ամբողջականության սպառնալիքների կանխատեսման ու դրանց չեզոքացման համար, անհրաժեշտ սահմանադրաիրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք ուղղված

կլինեն Հայաստանի Հանրապետության ընդհանուր շահերի բավարարմանը, այդ թվում՝ հենց հանրային իշխանության մարմինների միջև ծագած վեճերի կանխարգելմանն ու լուծմանը: Դրանք են՝

ա) պետական իշխանության ու կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև պետության տարածքային ամբողջականության ապահովման հարցերով լիազորությունների ինչպես արդյունավետ, այնպես էլ համաչափ բաշխման երաշխավորումը,

բ) նույն տարածքային ամբողջականության ապահովման հարցերով և սեփական պատասխանատվությամբ հանրային իշխանության մարմինների լիազորությունների ինքնուրույն ու արդյունավետ իրականացումը,

գ) Սահմանադրական օրինաստեղծ և իրավաստեղծ այլ գործունեության շրջանակում անհրաժեշտ ու կարևոր պայման է՝ պետական սահմանի սահմանամերձ վարչատարածքային միավորների շահերի ու կարծիքների հաշվի առնելու առաջնահերթությունը,

դ) իշխանությունների բաժանման ու հավասարակշռման երաշխավորման շրջանակում անհրաժեշտ է պետության տարածքային ամբողջականության ու միասնության ապահովումը կարող է նաև ընկալվել՝ որպես պետության ինքնշխանության դրսևորման անհրաժեշտ պայման:

**11.** Աշխարհի բազմաբևեռության բացակայության պարագայում միջազգային իրավակարգը մի դեպքում զարգանում է առավելապես պետությունների տարածքային ամբողջականության ապահովման ուղղությամբ, երբ խրախուսվում է տարածքային ամբողջականության սպառնալիքներից պետությունների կենսական շահերի պաշտպանությունը, իսկ մեկ այլ դեպքում, պետության տարածքային ամբողջականության և ժողովուրդների ու ազգերի իրավահավասարության և ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարաբերակցության շրջանակում առաջնայնությունը տրվում է երկրորդին՝ որպես մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների տարր: Նման երկակի ու հակասական մոտեցումները թերևս ոչ դրական ելքեր են կանխորոշում, այդուհանդերձ, հատկապես ժամանակակից իրողությունների պայմաններում Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության երաշխավորման և արցախահայության ինքնորոշման իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումները, որ՝ միջազգային անվտանգության երաշխավորման հիմքում պետությունների տարածքային ամբողջականության ապահովումը բխում է պետության և ազգային անվտանգության կենսական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, երբ պետության այդ շահերի պաշտպանությանը պետք է բխի ինչպես մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների, այնպես էլ՝ ժողովրդի ինքնորոշման իրավունքի արդյունավետ պաշտպանության բովանդակությունից, հետևաբար պետության տարածքային ամբողջականության հարգումն ու պահպանումը իրավաչափ է ու արդարացված, եթե միջազգային իրավունքի նորմերի շրջանակում և դրանց հիման վրա հիմնավորվել է, որ տվյալ պետությանը չի ամրակցվել այլ պետության պատմական

տարածք կամ տարածքի մաս՝ վերջինիս նկատմամբ ոչ իրավաչափ (այդ թվում՝ ոտնձգության) գործողության արդյունքում:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.**

1. **Ղազարյան Մ.Ա.,** Պետության տարածքային ամբողջականության իրավական ապահովման հիմնախնդիրները, **Մենագրություն** (գլխավոր խմբագիր՝ ի.գ.դ.,պրոֆ., Ա. Խաչատրյան), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան 2026թ., 138 էջ:

2. **Ղազարյան Մ.Ա.** (համահեղինակությամբ՝ **Ա.Խաչատրյանի**), Պետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրահիրավական երաշխիքները. տեսական-իրավական վերլուծություն «Բանբեր» Եվրասիա միջազգային համալսարանի գիտական հանդես, №1, 2024, էջեր 8-22,

3. **Ղազարյան Մ.Ա.,** Պետության տարածքը որպես սահմանադրահիրավական կարգավորման օբյեկտ, «Սահմանադրական դատարանի տեղեկագիր» գիտական հանդես, №1(113) 2024, էջեր 136-147,

4. **Ղազարյան Մ.Ա.** (համահեղինակությամբ՝ **Ա.Խաչատրյանի**), Պետության տարածքային ամբողջականության ապահովումը միջազգային իրավական առանձին չափորոշիչների շրջանակում, «Բանբեր» Եվրասիա միջազգային համալսարանի գիտական հանդես, №1, 2025, էջեր 29-37,

5. **Ղազարյան Մ.Ա.,** Տարածքային ամբողջականությունը պետության միասնականության պահպանման համատեքստում. տեսական և գործնական մոտեցումներ, «Եվրոպական համալսարան», 2024, գիրք 15(01), էջեր 126-132,

6. **Ղազարյան Մ.Ա.,** Պետական իշխանությունը և տեղական ինքնակառավարումը. փոխգործակցության դիալեկտիկան պետության տարածքային ամբողջականության ապահովման գործընթացում, «Եվրոպական համալսարան», 2025թ. գիրք 16(02), էջեր 97-105,

7. **Ղազարյան Մ.Ա.** (համահեղինակությամբ՝ **Ա.Խաչատրյանի**), Պետության տարածքային ամբողջականության սկզբունքի սահմանադրական բովանդակությունն ու գործառնական նշանակությունը, «Եվրոպական համալսարան», 2026, գիրք 17(01), էջեր 167-176:

**КАЗАРЯН МИЛЕНА АРТАКОВНА**

# КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ГАРАНТИИ ОБЕСПЕЧЕНИЯ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ЦЕЛОСТНОСТИ ГОСУДАРСТВА

**Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 — Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление).**

**Защита диссертации состоится 8 октября 2026 года в 16:00 на заседании специализированного совета 063 по юриспруденции Комитета по высшему образованию и науке Республики Армения, действующего при Межгосударственной образовательной организации высшего образования «Российско-Армянский университет», по адресу: 0051, г. Ереван, ул. Овсепа Эмина, 123.**

## РЕЗЮМЕ

Роль, значение и необходимость обеспечения территориальной целостности государств неоспоримы, что обусловлено необходимостью закрепления указанного принципа в конституциях практически всех государств. Как в межгосударственных, так и во внутригосударственных отношениях незыблемость/нерушимость государственных границ и территориальная целостность рассматриваются как главное условие установления взаимовыгодных и добрососедских отношений между государствами.

Принимая во внимание вышеизложенные обстоятельства, следует отметить, что актуальность темы диссертационного исследования обусловлена не только геополитическими событиями на Южном Кавказе, но и современными вызовами, связанными с обеспечением территориальной целостности Республики Армения и сохранением неприкосновенности ее территории.

Учитывая взрывоопасную геополитическую ситуацию в регионе, а также экспансионистские устремления соседних стран в отношении территориальной

целостности нашей родины, крайне важным становится не только создание эффективной системы защиты государственных границ, но и разработка научно обоснованных концептуально-теоретических подходов в рамках конституционно-правовой науки, которые послужат основой для совершенствования правового регулирования в данной сфере и формирования новой стратегии обеспечения территориальной целостности Республики Армения.

Таким образом, научные исследования проблем обеспечения территориальной целостности государства приобретают все большее значение, поскольку они играют ключевую роль в системе национальной безопасности.

Научная новизна исследования выражается в том, что в нем проведен системный и комплексный анализ теоретических подходов, законодательных актов и материалов правоприменительной практики, касающихся обеспечения территориальной целостности государства; выявлены существующие пробелы и недостатки, а также разработаны теоретически обоснованные предложения, направленные на их устранение и совершенствование правового регулирования. Кроме того, в работе представлена авторская концепция системы конституционно-правовых гарантий территориальной целостности государства, а также предложены пути их совершенствования и повышения эффективности.

Теоретическая значимость диссертационного исследования состоит в том, что его результаты по-новому раскрывают сущность принципа территориальной целостности государства как важнейшей исторической, политической, социально-экономической, правовой и духовно-культурной предпосылки развития государства и общества. А также переосмысливаются роль и значение сохранения неприкосновенности государственной территории в процессе свободного развития народа (нации) и каждого его члена. Практическая значимость диссертации заключается в том, что результаты исследования могут быть полезны в деятельности субъектов, обеспечивающих территориальную целостность государства, в процессе подготовки конституционных реформ и совершенствования законодательства, а также в сфере изучения дисциплины конституционного права.

**GHAZARYAN MILENA**

# Constitutional Legal Guarantees for the Protection of the State's Territorial Integrity

**Dissertation Abstract for the Degree of Candidate of Legal Sciences in the Field of 12.00.02 – Public Law (Constitutional Law, Administrative Law, Municipal Law, European Law, Public Administration).**

**The defense of the dissertation will take place on October 8, 2026, at 16:00, at the session of the Specialized Council 063 on Law of the Higher Qualification Committee of the Republic of Armenia, operating at the "Russian-Armenian University" Interstate Higher Educational Organization (123 Hovsep Emin Street, Yerevan 0051).**

## RESUME

The role, importance, and necessity of ensuring the territorial integrity of states are indisputable, as evidenced by the need to enshrine this principle in the constitutions of almost all states. In both interstate and domestic relations, the inviolability of state borders and the preservation of territorial integrity have been recognized as essential prerequisites for the establishment of mutually beneficial and friendly relations among states.

Taking the aforementioned circumstances into consideration, it should be emphasized that the relevance of the dissertation topic is determined not only by the geopolitical developments in the South Caucasus, but also by the challenges associated with ensuring the territorial integrity of the Republic of Armenia and safeguarding the inviolability of its territory

Taking into account the explosive geopolitical situation in the region, as well as the expansionist aspirations of neighboring states regarding the territorial integrity of our homeland, it becomes imperative not only to establish an effective system for the protection of the country's borders, but also, within the framework of the priorities of constitutional law science, to develop scientifically grounded conceptual and theoretical approaches that

would serve as a basis for improving legal regulations in this field and for creating a new strategy to ensure the territorial integrity of the Republic of Armenia.

Consequently, the scholarly examination of the problem of ensuring the territorial integrity of the state is of significant relevance, as this issue has assumed a special role and importance within the national security system.:

The scientific novelty of the research is reflected in the fact that the dissertation provides a systematic and comprehensive analysis of theoretical approaches, legislative acts, and law enforcement practice concerning the territorial integrity of the state. The study identifies existing gaps and deficiencies and formulates theoretically substantiated recommendations aimed at addressing and remedying these shortcomings. Furthermore, the dissertation presents the author's original conceptual framework concerning the system of guarantees for territorial integrity and proposes approaches for their improvement and increased effectiveness:

The theoretical significance of the dissertation is reflected in the fact that the research findings offer a renewed interpretation of the essence of the principle of the territorial integrity of the state as an essential prerequisite for the development of historical, political, socio-economic, legal, and spiritual values. Furthermore, the study re-evaluates the role and importance of safeguarding the inviolability of state territory in ensuring the free development of the people (nation) and each individual member of society.The practical significance of the dissertation is determined by the applicability of the research outcomes to the activities of bodies and entities involved in safeguarding state territory, to the processes of constitutional reform and legislative improvement, as well as to the academic study and teaching of constitutional law.